


Հաստատված է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի  
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում՝ 30.06.2014թ.-ին

նախագահ՝ Ա. Բեգլարյան



**«ՇԵՆ ՀՈՒԼԴԻՆԳ» ՓԲԸ**  
**2013 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԶԱԽՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ**  
**ՏԱՐԵԿԱՆ ԶԱԽՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ**  
**ԿԱՐԳ**

1. Սույն փաստաթղթով սահմանվում է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) 2013 թվականի /31.12.2013թ./ կուտակային շահույթի բաշխման և տարեկան շահութաբաժինների վճարման կարգը:
2. Սահմանել, որ Ընկերության 2013 թվականի կուտակային 3,282,928.00 հազ. ՀՀ դրամ շահույթից 99,997,500.00 ՀՀ դրամը ուղղվում է ընկերության շահութաբաժինների վճարմանը:
3. Սահմանել, որ Ընկերության մեկ հասարակ անվանական բաժնետոմսին բաժին ընկնող շահութաբաժնի մեծությունը կազմում է 298.5 ՀՀ դրամ (= 99,997,500.00 / 335,000.00):
4. Սահմանել, որ Ընկերության 2013թ.-ի տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերեր են համարվում հասարակ անվանական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող այն անձինք, ովքեր 2014 թվականի հունիսի 06-ի դրությամբ ընգրկված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում:
5. Սահմանել, որ որ Ընկերության 2013թ.-ի տարեկան շահութաբաժինների վճարումը կատարվում է կանխիկ կամ բանկային փոխանցումով, սկսած 2014 թվականի հունիսի 1-ից և ավարտվում մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: